Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՎՐԻՀԻՍԱՐՈՒ

Աշխատասիրութեամբ

ՆԱԹԱՆԵԱՆ ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ծախիւք Սէֆէրճեանց Մեծապատուի

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ

Բ. Աշխատութիւն Հեղինակին

Կ. ՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

—1872—

91(56)
Ն-16

10 NOV 2011
91(56)
Հ-16
10 NOV 2011

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՎՐԻՀԻՍԱՐՈՒ

Աշխատասիրութեամբ

ՆԱԹԱՆԵԱՆ ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

1004
18423

Արդեամբ Սէֆէրճեանց Մեծապատուի

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ

Բ. Աշխատութիւն Հեղինակին

Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

—1872—

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

10 JUL 2013

21499

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր հրամանաւ և Ազգային Կեդրոնական Վարչութեան որոշմամբ Սահմանադրութեան գործադրութեան պաշտօնով 1871 Սեպտեմբեր 16 թուով Կոստանդնուպօլսէն ուղեւորեցանք դէպ 'ի Սիվրիհիսար, որ Գաղատիոյ վիճակ է, և հոն հինգ ամսոյ չափ մնալով ինձ հրամայուած պաշտօնը ամբողջապէս աւարտելէն վերջ կրկին վերադարձանք 'ի Կոստանդնուպօլիս ։

Այս անգամ ալ Սիվրիհիսարու վրայօք տեղեկութիւն մը տալ փափաքելով, հոն բնակող Ազգային վիճակը՝ թիւը և ուրիշ ազգաց ընթացքը ու Քաղաքին դիրքը եւ. եւ. 'ի գիր գրօշմելով սոյն փոքրիկ տետրիկս պարզ ու ընտանի ոճով տպագրութեամբ 'ի լոյս ընծայելով կը նուիրեմ իմ Սիրելի Ազգիս ։

Վստահ ըլլալով թէ՝ սոյն աշխատութիւնս արգոյ ընթերցողաց ներողամտութեանը և քաջալերութեանը կ'արժանանայ ։

1872 Փետրվար 10 — ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Կ. Պոլիս — ՆԱԹԱՆԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՎՐԻՀԻՍԱՐՈՒ

Փոքր Ասիոյ Արևմտեան Հարաւային կողմը ընդարձակ դաշտի մը եղերք երկու բլրակներու մէջ հաստատուած տեսարանը անշուք Գիւղաքաղաք մի է, և Դաղստիոյ (Էնկիւրիւ) վիճակայ մինն ըլլալով, մէջ տեղի հեռաւորութիւնը կարաւանով քսան և չորս ժամու չափ կը տևէ, որուն չորս կողմի ամբողջ երեք մասը ինքնաբոյս ամենաբարձր սպառաժներով շրջապատուած, և իր ծոցին մէջ յիշեալ Գիւղաքաղաքը կը պատըսպարէ, և միայն Արևմտեան կողմը բաց ըլլալով ճանապարհորդները այն կողմանէ կ'երթևեկեն, Բայց թէ Գիւղաքաղաքին դիրքը և թէ շրջապատը բարձրացած ինքնաբոյս բերդը յիրաւի խիստ զարմանալի է, Յիշեալ բերդանման սպառաժները սրածայր ըլլալուն պատ-

ճառաւ է, որ Սիվրի-Հիսար կը յիշուի նոյն Գիւղաքաղաքին անունը, և նոյն ինքնաբոյս բերդին դաղաթը բաւական չափ ընդարձակ ըլլալով՝ որուն մէջ երեւցած հիմերէն կը յայտնուեր որ ասկէ հարիւր տարի յառաջ շէնքեր կան եղեր. սակայն այժմ բոլորովին հիմնայատակ ըլլալով, չդիտցուիր թէ՝ որ ազգի տերութեան ժամանակէ մնացած պիտի ըլլայ արդեօք. կամ ինչ տեսակ շէնքեր է եղեր, որոնց հետքեր նշանակուած թիւ մը չի գտնուիր պատճառաւ հետաքրքիր չ'եղայ։

Բայց յիշեալ Գիւղաքաղաքի Հայրենական ծերունի մարդոյ պատմութիւնէն քաղելով հետաքրքիր եղայ, որ նոյն յիշեալ ինքնաբոյս բերդի դաղաթը տակէ յիսուն կամ վեցտասն տարի յառաջ բնիկ տեղացի այլազգիներէն (Ղազան օղլու Եաղըճը Իսրահիմ) անուանով արիւնարբու բարբարոս և բռնաւոր անուանի Ցաճիկ մը կը բնակի եղեր, և տերութեան օրինաց անհնազանդ դտնուելով թէ Գիւղաքաղաքի բնակչաց և թէ յիշեալ Սիվրիհիսարու սեպհականուած 60 կառորէ բաղկացեալ համայն գիւղօրէից տիրապետելով շարունակ երեսուն տարիի չափ տեսակ տեսակ և չի լսուելիք բարբարոսութիւններ կը բանեցուցանէ. նամանաւանդ յիշեալ Սիվրիհիսարու Գիւղաքաղաքի բնակիչ անմեղ Հայոց դըլխուն հասուցած անտանելի չարիքներ ունի, որ լսողին սիրտը յիրաւի կը ճմլուի։ Ուստի հոս յիշելու զանց ըրած եմ, ահաւասիկ դժբաղդ Հայոց ճակատագիրը՝ ուր որ պատահիր է, և ուր որ դըտնուիր են հալածանք, տառապանք և հարատահարութիւնք դէմերնին են ելեր. բայց յիշեալ բռնաւոր հարատահարիչ դաղանը վոխանակ իր ըրած անօրինութիւններուն ինքն ալ չարաչար դլխատուելով աշխարհիս երեսէն վերցուեր է, և ինչպէս վերնալու պատմութիւնը մեր սիրելի ընթերցողաց համառօտապէս տեղեկութիւն մը տալու պատճառաւ հոս յիշելու պարտաւորեցայ։

Ըստ Ցաճկայ թուականին հազար երկու հարիւր երեսունէն սկսեալ Օսմանեան կայսեր Սուլթան Մահմուտ (Եէնիչէրիները) սպաննելէն յետոյ, երբոր կըսկսի բոլոր Ցաճկաստանի նահանգներու մէջ նոր բարեկարգութիւններ մտցնել, կ'իմանայ որ Սիվրիհիսարու Գիւղաքաղաքի շրջապատը գտնուած ժայռերու մէջ իր օրինաց դէմ կեցող (Ռեզուն օղլու Եազըճը Իպրահիմ) անունով տեղացի այլազգիներէն անուանի՝ բռնաւոր՝ (Տէրէպէյ) մը կը պատսպարուի, իսկոյն ան ատենի գտնուող նախարարներէն մէկը (Մուսթաֆա փաշայ) անունով նախարարը իր յառաջը կանչելով հրաման կ'ընէ թէ՝ յիշեալ Եազըճը Իպրահիմին գլուխը Պոլիս պիտի բերուի անշուշտ։ Ան ժամանակ տէրութենէն իրեն եղած հրամանին համեմատ յիշեալ նախարարը իրեն յանձնուած զօրքերովը մէկ տեղ կ'ուղեւորի դէպ 'ի Սիվրիհիսար։ Յիշեալ (Տէրէպէյին) իր լրտեսներէն իմանալով գլխուն դալիք վտանգը, իսկոյն իրեն

խորհրդակից (Լօմէր էֆէնտի) անունով անձը՝ որ ան ատեն Գիւղաքաղաքին Միւֆթին է եղեր, իր մօտը կանչելով խորհուրդ կը հարցնէ, թէ՝ ինչպէս ընեմ, որ սա վտանգէն ազատիմ։ Յիշեալ խորհրդակից Միւֆթին հարատահարիչ Եազըճը Իպրահիմին պատճառաւ՝ Գիւղաքաղաքին գլխուն գալիք վտանգը դուշակելով, կը պատասխանէ անոր, թէ՝ դու մինչև (մէքքէ) չ'երթաս, այս վտանգէն չես կրնար ազատուիլ։ Այս խորամանկական ձևերով յիշեալ բռնաւոր անձը Սիվրիհիսարու Գիւղաքաղաքէն դուրս կը հանէ։ (Տէրէպէյին) յիշեալ [Միւֆթիին] խրատը մտիկ ընելով Գաղաքէն դուրս կ'ելլէ մէկու մը ձևաս չի հասցունելով, և ինքը կերպարանափոխ ըլլալով ուղղակի կ'երթայ Կեսարիայի մօտ (Հաճի-Պէկ-թաշ) անունով գիւղը և հոն կը սկսի նորէն ամուսնանալ։

Յիշեալ Մուսթաֆա փաշան իր զօրքերով կուգայ Սիվրիհիսար և կը նայի որ տէրութեան ապստամբը հոն չէ, ան-

միջնապէս ամեն տեղ գաղանի լրտեսներ կը հանէ ։ և շուտով ով ըլլալը կ'իմանայ ։ և յետոյ պատրաստուելով կ'երթայ (Հաճի-Պէկ-Թաշ) գիւղի եղերքները գաղտնապէս կը բնակի ։ և լրտեսի միջոցաւ յիշեալ ապստամբին բնակած տանըն իմանալով, անմիջապէս կը յարձակի ապստամբին վրայ և կը ձերբակալէ զինքը, և խեղճն չարաչար գլխատել կուտայ և գլուխը ցցի մը վրայ անցուցած այնպէս Պօլիս կը բերուի ։ Յիշեալ ապստամբը վաթսուն կամ վաթսուն և հինգ տարեկան հասակի մէջ կայ եղեր իւր գլխատման ժամանակը ։

Նաև Նաջըճի Խըլլըհեմի պատճառաւ, նոյն ժամանակին փոքր Ասիոյ սահմանին մէջ գտնուող տէրութեան ապըստամբներէն երեսուն երկուքի չափ ապստամբ ալ չարաչար կերպով կը գըլխատուին ։ Այնուհետև նոյն սահմանը կը խաղաղի սակաւ ինչ ։ Սոյն ապըստամբաց գլխատուիլը գրեթէ յիսուն և ութ տարիի չափ է ։

Ապստամբաց վրայօք տուած համառօտ ծանօթութիւնս բաւական համարելով կուգամ մեր տեղեկագրութեան շարունակութեան սկիզբը ։

Սիվրիհիսար Գիւղաքաղաքի դիրքը արդարև զարմանալի և օդը և ջուրը խիստ գեղեցիկ ։ կայ իր մէջ երկու հազար եօթը հարիւր տուն Հայ և Տաճիկ Ազգերէ բաղկացեալ ։

Հայք եօթը հարիւր յիսուն տուն չափ առանձին թաղ մը կը կազմեն ։ բոլոր բընակիչք գրեթէ հինգ հազար երկու հարիւր յիսունի կը հասնին ։

Տեղւոյն Հայ բնակիչներէն մանաւանդ կանանց խօսակցութենէն հասկըցայ, որ Սիվրիհիսարու բնակիչ Հայերը Պարսկաստանի կողմերէն են ։ որոնք Տէմիր—Գափուի պատերազմի ժամանակ սաստիկ նեղուելով՝ շատերը այս պատճառաւ ՚գաղթած, և ոմանք ալ դերութենէ փախչելով, այս տեղերը ապաստանած են ։ 'ի սկզբան բաւական ատեն Սիվրիհիսարու Գիւղաքաղաքէն դուրս

մէկ քառորդ ժամու հեռաւորութեամբ
գիւղ մը պատելով հոն կը բնակին . սա-
կայն Տաճկաց բարբարոսութենէն չի դի-
մանալովնին՝ յետոյ կը քաշուին պարըս-
պապատ Գիւղաքաղաքին մէջ, որ մինչև
ցարդ նոյն գիւղին անունը (Խըրխատեան
Գէօյիւ) կը յիշուի , և այս պատճառաւ
է որ նոյն տեղը Հայ գտնուելով հետըզ-
հետէ բազմացեր և այսուհետև ալ բազ-
մանալու վրայ են ։ Ասոնք հին Ջուղայի
կողմերէն չորս կամ հինգ հարիւր տար-
ուան գաղթական կ'երևան ։

Ունին յանուն Ս. Երրորդութեան կա-
ռուցեալ մեծ և փառաւոր Եկեղեցի մը
կէս քար ու կիր , որուն երկայնութիւնը
է ութսուն երեք ոտնաչափ , իսկ լայ-
նութիւնը հարիւր տասն երեք ոտնաչափ ։
Արևելեան կողմը չորս Խորան ունի , եր-
կուքը մեծ և երկուքը փոքր . այս Խո-
րանաց ուղղութեամբ աջ կողմը 'ի հը-
նուց մնացած յանուն Պետրոսի և Պօղո-
սի Առաքելոց կառուցեալ Տաճար մը
կայ քար ու կիր փառաւոր գմբէթով խա-

չաձև և սրբատաշ քարերով արծաթա-
պատ փոքրիկ դուռով մը , ասոր թիւը
անյայտ ըլլալուն չ'գիտցուեցաւ որուն
շինել տալը և քանի տարուան կերտուած
ըլլալը . սակայն յիշեալ Ս. Տաճա-
րի դրան վրայ դրսի դին ճակատը յի-
շատակարան մը կար , ուրկէ տեղեկացայ
որ ասկէ քառասուն երեք տարի յառաջ
Ստեփաննոս Պատրիարքի օրով կրկին
անգամ նորոգուած է ։ Շատ հաւանա-
կան է , որ ան ատեն բանուորները անհո-
գութեամբ Տաճարին շինութեան առա-
ջին թիւը կիրով ծածկած ըլլան ։

Ունի հինգ Քահանայ , որոց անուանքն
են , Արժ . Աւագ Տ. Ներսէս , Տ. Ստե-
փան , Տ. Սարգիս , Տ. Յարութիւն և Տ.
Յովհաննէս . բայց ասոնցմէ երեքը յս ,
Տ. Ստեփան , Տ. Սարգիս և Տ. Յարութիւն
Քահանայք ոմանք խիստ ծերունի և ոմն
ալ ախտաւոր ըլլալնուն՝ անկարող են
քահանայագործութիւն ընելու ։ Հինգ
հազարէն աւելի Հայոց ժողովուրդը այն
երկու Քահանաները կը հովուեն խիստ

գ ժուարութեամբ. ժողովուրդը մեծ կաթոտութիւն կ'զգայ մէկ քանի արժանաւոր քահանաներ հոգւոյ հովիւներ ունենալու։ Ունի բառական արժանիներէն բարձրաներ և անօթներ, որոյ մէջ կը գտնուին երկու երեք հարիւր տարուան հաղորդութիւն ծանր թաչիր, աշտանակներ, եւ։ Ունի նաև տասն և վեց տնաշէն երկայնութեամբ և եօթնտասուն ոտնաչափի լայնութեամբ գեղեցկաշէն դաստիարակ մը որուն չորս սրահները երկաթեայ վանդակներով (շէպէքներով) զարդարուած է, առաջ մէջ կը գտնուի նորաշէն բանկալ մը և երեք ալ գերեզմանի մէկը վարդապետի և երկու քը քահանայի, և երկու կոչնակ մէ յմէկ պատարաններ ունի, որ Ս. Գնաւնդ ալ կողմը կը գտնուի, և Ս. Սարգիսնոս որ ձախ կողմը կը գտնուի։ տակիս զատ եկեղեցւոյ բակին մէջ թէ՝ մեծ և թէ՝ փոքր եօթը սենեակ։ մարմարոնեայ քարերով գեղեցկաշէն ցնցուղ պօղնի (շատրուան) մը։ երկու փողոցի դուռ մէկը

հարաւային կողմ և միւսը հիւսիսային։ և սակաւ ինչ պարտէզ։ Պօլսոյ շէնքերու նման չորս սենեակէ բաղկացեալ վաղաւուր բաղանիս մը։ որ տարին տասն երեք հազար ղրշ. ի շահ կը բերէ։ նոյնպէս խանութ մը։ որ տարին տէր հարիւր ղրշ. շահ կը բերէ։ և մէկ քանի սենեակէ բաղկացեալ տուն մը։

Յահակ Մեսրոպեան և Հուիրսիմեանց անունով երկաթ վարժարան մը։ որոնց պէտքերը եկեղեցւոյ ունեցած կալուածոց շահերէն կ'ոգտուի։

Արական սեռի դպրոցը երեք կարգի բաժնուած է. առաջինը ուսումնարան երկրորդը նախակրթարան. և երրորդը ծաղկոց։

Ուսումնարանն չորս սենեակէ բաղկացեալ գեղեցիկ շէնք մ'է, ունի Պօլսեցի Յակոբ Գալբաքճեան անունով հայկարան դասատու մը, որ անձնուիրաբար կոչնատեղ տղոյց յառաջադիմութիւնն մասին. երկաթ ուտնան պատրաստ աշակերտաց թիւը վարնան և

Յահակ Մեսրոպեան և Հուիրսիմեանց անունով երկաթ վարժարան մը։ որոնց պէտքերը եկեղեցւոյ ունեցած կալուածոց շահերէն կ'ոգտուի։

Արական սեռի դպրոցը երեք կարգի բաժնուած է. առաջինը ուսումնարան երկրորդը նախակրթարան. և երրորդը ծաղկոց։

Ուսումնարանն չորս սենեակէ բաղկացեալ գեղեցիկ շէնք մ'է, ունի Պօլսեցի Յակոբ Գալբաքճեան անունով հայկարան դասատու մը, որ անձնուիրաբար կոչնատեղ տղոյց յառաջադիմութեան մասին. երկաթ ուտնան պատրաստ աշակերտաց թիւը վարնան և

հնդի կհասնի, և ուսումնարանի աշակերտք հինգ կարգի բաժնուած են։

Առաջին կարգը ինը տղայ կը բաղկանայ, որոնք քերականութիւնը աւարտած աշխարհաբառէ գրաբառ թարգմանութեան և Եղիշէի վերլուծութեան կ'զբաղին, թուաբանութեան հասարակ և տասնարդական կոտորակները աւարտած համեմատութեան նոր ըկըսած են, աշխարհագրութեան մասին ալ բնականը և քաղաքականը. միայն Եւրոպան իր պատմականովը աւարտած Ասիան ալ նոր սկսած, Տօնարարակարութեան մայր հաշիւները, Գաղղիերէն քերականութիւն, Տաճկերէն (սարֆ) Ազգային պատմութիւն և Սրբազան պատմութիւն կկարդան։

Երկրորդ կարգը տասն և մէկ տղայ կը բաղկանայ, Ութ Մասուն ը Բանին աւարտած Համաձայնութեան նոր սկսած են, Թուաբանութեան Հասարակ Կոտորակը աւարտելու վրայ են. Աշխարհագրութեան, Եւրոպային խարիսի աւարտած պատմականին մէջ են, որոնց հետ մէկ տեղ կ'ուսանին Ազգային և Սրբազան Պատմութիւն, և Տաճկերէն (ինշա),

Երրորդ կարգը տասն երեք տղայ կը բաղկանայ, որոնք կը կարդան Քերականութիւն, Թուաբանութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն, Ազգային Պատմութիւն. և Տաճկերէն (ինշա) դեռ նոր սկսած։

Չորրորդ կարգը քսան տղայ կը բաղկանայ, որոնք տակաւին նոր սկսած են Քերականութիւն և Քրիստոնէական վարդապետութիւն։

Հինգերորդ կարգը կը բաղկանայ տասն երկու օրիորդներէ, որոնք Քերականութեան Ութ Մասունը աւարտած Համաձայնութեան նոր սկսած են։

Նախակրթարանի մէջ հարիւր քսանի չափ աշակերտք կան, որոնք մասնաւոր հանարտութիւնմը ձեռօք կը դասաւորուին Ընթերցարան և Ի կարդալով։

Ծաղկոցի մէջ կը գտնուին հարիւր

յիսունի չափ աշակերտաց, որ մասնաւոր մանկավարժի մը ձեռօք կը դաստիարակուին Հեգարան և այլն կարդալով ։

Իգական գեղեցիկ սեռի Դպրոցի մէջ ալ եօթանասուն օրիորդ հասարակ ընթերցման կը պարապին Ֆէրէշթէեան ծգնազգեայ Տիրացու Գրիգոր անուն համբաւաւոր մի ձեռօք. հօս իգական սեռի դաստիարակութիւնը արական սեռի դաստիարակութենէն աւելի յառաջ պիտի երթայ, թէ որ այժմեան հոգաբարձութիւնն յարատևելու ըլլան. թէև այս մասին անփոյթ էին առաջին անգամ, բայց ներկայիս մէջ ապագային համար գեղեցիկ յոյսեր կը տածեն նորընտիր պատուարժան Հոգաբարձուք. մանաւանդ մեծ. Թաղական խորհուրդք, որ Դպրոցաց յառաջադիմութեան մասին անձնուիրաբար կ'աշխատին ։

Օխլի Հիսար Գիւղաքաղաքի Արևմտեան կողմ Լնքնարքոյ ժայռերուն մօտ 'ի հնուց մնացած գետնափորի ջուր մը կայ, որուն համար երբեմն երբեմն բա-

ւական ժողովուրդ ուխտի կ'երթան եղեր. յետոյ ամէն մէկ տարի յառաջ յիշեալ ուխտի տեղը յանուն Ս. Աստուածածնայ փոքրիկ Եկեղեցի մը կը կառուցանեն, և մէկ տարի չանցնելով տեղւոյն բարբարոս Տաճիկները կ'այրեն, որ այժմ այրած կեցած է այնպէս. բայց ժողովուրդք ըստ սովորութեան ամեն տարի դարձեալ նոյն տեղը կը դիմեն ։

Տեղւոյն Հայ ժողովուրդը Սահմանադրական Ազգ մը ըլլալով, սահմանադրապէս ընտրուած տասն երկու բանիբուն անձերէ բաղկացեալ օրինաւոր Թաղական խորհուրդ մը ունի, որ սկսած են տեղւոյն Ազգային գործերը և դատերը առանց իշխանութեան դուռը դիմելու սիրով և խաղաղութեամբ տեսնել. և ընտրած է իր մէջէն օրինաւոր ընտրութեամբ չորս անձերէ բաղկացեալ հոգաբարձութիւն մը և մէկ ալ տնօրէն, որ նոքա ալ անդուլ հսկողութեամբ կ'աշխատին վարժարանները թէ նիւթապէս և թէ բարոյապէս յառաջացնելու ։ Ու-

նին նաև օգնական ընկերութիւն մը Բուսաբուծական յառաջադիմութեան համար ։ Անձնուէր ընկերութիւն մը՝ հասակաւոր մարդկանց ընթերցանութեան համար ։ Թանգարանի ընկերութիւն մը՝ Դպրոցի պէտք եղած գրքերը մատակարարելու և աղքատ աղջկանց ձրի գիրք տալու ։ Այս մասին գովելի ընծայք մը ունին, ժողովուրդք բնութեամբ ուսումնասէր, բարեպաշտ, աղքատասէր, և ազգասէր են․ աղքատիկ ընտանեաց համար ուտելիք հայթայթելու բարի և հինաւանդ սովորութիւն մ' ալ ունին, որ ամեն շաբաթ երեկոյ կը գործադրեն ։

Այսոնք ընդհանրապէս մեծաւ մասամբ հարուստ՝ վաճառականութեամբ կ'ապրին․ արական սեռի մեծ մասը սովորաբար պանդխտութեան մէջ կանցնէ իր կեանքը ։ Յիշեալ Գիւղաքաղաքի բերքն է ըստ մեծի մասին տեսակ մը այծի բուրդ (Թիֆթիկ), խաշխաշ (աֆիօն), չէօյէն և ոչխարի բուրդ և այլն։ Բաւականին չափ Հայոց մէջ ոչխար կամ

այծ ունեցող անձինք կան, որ մեծամեծ առևտուրներ կ'ընեն, իսկ հողագործութիւն չունին ։

Կանայք ալ առհասարակ գուլպայ գործելով կը շահուին, և կերպարանքնին է միաձև հագուստ, ցը պարեգօտ (էնթարի) վրայէն սև չուխայէ երկար վերարկու, գլուխնին մէյ մէկ սպիտակ սաւան ծածկելով, և ոտքերնին ալ դեղին կօշիկ հագած այնպէս փողոց կ'ելլեն․ սակայն այժմ նոր սկսած են ուրիշ տեսակ ոճից աման հագնիլ․ բայց քիչ կը գտնուին ։ Թէպէտ իրենց Մայրենի լեզունին չեն կորսնցուցած և միշտ Հայերէն կը խօսին, բայց աղաւաղեալ է և շատ բառեր կան՝ որ խօսած ժամանակնին չի հասկցուիր, ուստի արժան դատեցի հոս մէկ քանին յիշելու,

Որք են,

Կէլէճէ	ըսել	խօսիլ	ըսել է
Աւուան	»	Գեղեցիկ	»
Խոցծի	»	Սխալ	»
Տէկ	»	Երեք	»

Ցօպինած ըսելը Նշանած ըսել է
Իրիս » Ինչպէս »

և այլն։ Սոնց նման անհնչան բառեր շատ կան և խօսելու առեթին լսողը կը կարծէ թէ օտար լեզուաւ կը խօսին։ բայց յուսալ եմք որ Տեղւոյն բարեկարգեալ երկսեռ վարժարանաց շնորհիւ հեղինեռ սոյա աղաւաղեալ լեզունին պիտի շակուի անտարակոյս։

Տաճիկք երկու հազար տունէ բաղկացած տարածեալ գիւղք մ՝ ունին, որոնց թիւը համեմատական հաշուով տասը հազարի կը հասնի։ Հայոց հետ խիստ վատաբար կը վարուին։ մանաւանդ կանայք Հայ կանանց հետ։ շատ անգամ Հաւատոյ և կրօնի դէմ սարսափելի հայհոյութիւններ կ՝ընեն, որոնց մէկ քանի անգամ հանդիպած եմ։ միսլ բանիւ վերջին աստիճան մոլեռանդ և ագէտ են, և տակաւին չեն ղդացած ուսման յարդը որով տեսակ տեսակ չարութիւններ կը տեղացնեն խեղճ և անօգնական տեղացի Հայոց գլխուն։ Ասկէ մէկ տարի յառաջ վերոյիշեալ ապստամբ Ուզուն օղլու Եաղբճը Իպրահիմի որդի (Հիւսէյին պէյ) անունով չար անձն ալ իր վատ հօրը նման Հայոց գլխուն ուղղակի կամ անուղղակի կերպով շատ չարիքներ հասուցեր է։ բայց վերջապէս ինքն ալ տարի մը առաջ սատկեր է։ այժմ Հայերը սակաւ ինչհանդիստ են։

Տեղւոյն այլազգի կանանց կերպարանքն է այլանդակ, ընդհանրապէս գլուխնին արծաթեայ քառանկիւնաձեւ գլխանոց (թէփէլիք) կը դնեն, հագուստնին միաձեւ։ այսինքն անդրավարտիկ (շալվար) վրայէն սև վերարկու և գլուխնին տեսակ մը սև ծածկոյթով կը ծածկեն ու այնպէս փողոց կելլեն, բայց զարմանալին սա է որ այլազգիները թէև բարբարոսաբար կը վարուին Հայոց հետ, բայց դարձեալ իրենց շահը և ապրուստնին Հայերէն է, մինչեւ անգամ այլազգի կանանց մէջէն շատերը Հայոց փողոցներու մէջ ուտելիք ծախելու կելլեն ամէն առաւօտ իրենց

օրապահիկնին ճարելու համար, անոնց մէջ հողագործութեան պարապողներ ալ կան, բայց շատ քիչ. և վաճառականք սակաւաթիւ են մեծաւ մասամբ ալ աղքատ :

Եւ յիշեալ գիւղաքաղաքի թէ՛ Հայոց և թէ՛ Տաճկաց տուները ընդհանրապէս պանդոխաձևեն և վրան ալ հողով ծածկուած, բայց նոր սկսած են կղմինտր գործածելու :

Այս գիւղաքաղաքիս մէջ կայ իշխանութեան դուռ մը որ կը բնակի գայմագամը իր զինուորներով, երեսուն մզկիթ մեծ և փոքր. տասը դասատուն (մէտրէսէ) ինը ոչինչ մասնաւոր դըպրոցներ, Բիւջալիէ մնացած դղեակ մը խիստ յետադէմ վիճակի մէջ, քանի եւ չորս աղբիւր, տասը հացի փուռ, հինգ պանդոկ. չորս բաղանիք որուն մէկը Հայոց է և երկուքը Տաճկաց և ութ հարիւրի չափ խանութ պարունակող բաւական ընդարձակ շուկայ մը.

Գիւղաքաղաքէն դուրս մէկ քառորդ

հեռաւորութեամբ արևմտեան կողմ Հայերը փառաւոր այգիներ ունին որոց մէջ կայ գեղեցիկ տուներ ամառնային բնակութեան համար. դաշտի մէջ հարաւային կողմ Սիվրիհիսարէն մէկ քառորդ հեռաւորութեամբ քանի մը ջաղացքներէ բաղկացեալ (դէրէն) անունով ագարակ մը կայ, որ բոլոր բնակչաց ցորեանները հոն ալիւր կ'ըլլան :

Ահաւասիկ Սիվրիհիսար գիւղաքաղաքի դիրքը, ձևը, բնակչաց ընթացքը և որքանութիւնը տեղեկագրով կը նուիրեմ սիրելի ազգայնոցս :

Եւ ահա այս վերոյիշեալներս Պօլսոյ բնակ սիրելի ընթերցողք թող լաւ նըկատողութեան առնեն թէ՛ մեր Գաւառաբնակ անմեղ Հայերը ուղղակի կամ անուղղակի տեղ տեղ ի՛նչ հալածանքներ, տառապանքներ և նեղութիւններ կը կրեն Տաճկաստանի օրէնքները չիճանչցող այն բարբարոս անօրինաց ձեռքէն, որ յիրաւի ճշմարիտ Հայու արիւն կրող սիրտ մը չի դիմանար՝ երբոր նոյա

աղաղակը կը լսէ ու անոնց թշուառ կացութիւնը կը տեսնէ։ Ուստի Կ. Պոլսոյ Պատրիարքարանի Կեդրոնական ազգախնամ Վարչութեան ուշադրութիւնը հըրաւիրելով նոցա խնամոցը կը յանձնեմ։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0431385

21499

ԴԻՆ Զ ՂՈՒՐԱՇ